

Առանց Ծախսի մասնակցության 2009-ի Medi-Cal Ծրագիր հաշմանդամ երեխաների համար

Նետեյալ ընտանիքների բազմաթիվ հաշմանդամ երեխաներ իրավասու են առանց Ծախսի մասնակցության Medi-Cal-ի Տարեցների եւ հաշմանդամների Աղքատության դաշնակցային մակարդակի Aged & Disabled Federal Poverty Level (A&D FPL) ծրագրից օգտվել: Եթե երեխայի թույլատրված եկամուտը ավելի է, ապա նա օգտվելու իրավասու չէ:¹ Նախարարությունները պետք է լինեն համաձայն SSI-ի թույլատրված սահմանների: Դուք չեք կարող ծախսերն ավելացնելու ճամփով այս ծրագրին իրավասու լինելու հնարավորություն ձեռք բերել:

Նետեյալ ընտանիքների հաշմանդամ երեխաները 2009-ի վերոհիշյալ ծրագրին իրավասու են.

Մեկ երեխայով միայնակ ծնող՝ իրավասու է, եթե ամսական համախառն եկամուտը \$3551-ից չի գերազանցում:

Երկու երեխայով միայնակ ծնող՝ իրավասու է, եթե ամսական համախառն եկամուտը \$3851-ից չի գերազանցում:

Մեկ կամ երկու երեխայով զույգ ծնող՝ իրավասու է, եթե ամսական համախառն եկամուտը \$4219-ից չի գերազանցում:

Չորս երեխայով զույգ ծնող՝ իրավասու է, եթե ամսական համախառն եկամուտը \$4869-ից չի գերազանցում:

Եթե ընտանիքում որեւէ մեկի համար բժշկական ապահովագրության վճարումների ծախսեր կան եւ եթե եկամուտը շահված եկամուտ է, ապա առավելագույն դրույքաչափը կմեծանա այդ վճարումների գումարի կրկնակիի չափով:

Medi-Cal-ի ծրագիրը որոշում է SSI-ի հաշմանդամության պայմանները լրացնող երեխայի իրավասու լինելը՝ ըստ հետեյալ քայլերի. *առաջին*, Medi-Cal-ն է ճշդում ընտանիքի շահված կամ չշահված եկամտի հաշվարկումը: Զեղչերն ընդգրկում են ընտանիքի բոլոր ապահովագրական վճարումները: *Երկրորդ*, ընտանիքի բոլոր անդամների համար Medi-Cal-ը հանում է հասանելիք խնամքի հատկացված գումարը, բացառությամբ՝ հաշմանդամություն ունեցող երեխայի: Օրինակ, երկու ծնողով եւ չորս երեխայով ընտանիքի կամ 6 անդամ ունեցող ընտանիքի համար Medi-Cal-ը կհանի հինգ հոգու հասանելիք խնամքի հատկացված գումարը կամ \$1259: *Երրորդ*, ավելացածը երեխային տրամադրված գումարն է: *Չորրորդ*, եթե մնացածը մեկ անձի համար սահմանված Աղքատության դաշնակցային մակարդակը չի գերազանցում, (\$903 2009-ին) գումարած \$230 (մեկ անձի համար եկամտի հատուկ զեղչը), ապա երեխան իրավասու է:

DHS All-County Letter Nos. 00-57, 00-68, 01-18; Welf. & Inst. Code 14005.40.

¹ Եթե ընտանիքի եկամուտը շահված եկամուտ է եւ սահմանված դրույքաչափից մի փոքր ավելի, դուք կարող եք նվազեցնել հաշվարկվող եկամուտը, այն դեպքում եթե դուք բժշկական եւ երեխայի խնամքի համար չհատուցվող ծախսերի աշխատանքային սննդի ծրագիր (cafeteria plan) ունեք: Այդ դրամը չի հաշվվում, որովհետեւ այն Social Security FICA-ի հարկման ենթակա չէ:

**Երեխայի իրավասու լինելը 2009-ին
որոշվում է ըստ հետևյալի.**

**Տարեցների եւ հաշմանդամների FPL ծրագրի աշխատանքային
թերթիկ**

Նպաստներից եկամուտ \$ _____

Ընդհանուր եկամտից հանած \$20 գեղչ (20.00)

Նպաստներից հաշվարկելի ընդհանուր եկամուտ \$ _____

Համախառն շահված եկամուտ \$ _____

Հաշվեկշռից հանած \$20 գեղչ (_____)

Շահված եկամտից \$65 գեղչ (65.00)

Գումար \$ _____

50% պակաս (_____)

Ընդհանուր հաշվարկելի շահված եկամուտ _____

Ընդհանուր հաշվարկելի շահված/չշահված եկամուտ _____

Հանած որեւէ բժշկական ապահովագրության վճարում (_____)

Հանած՝ եթե ընտանիքում կա հաշմանդամ երեխա,
այդ ընտանիքի բոլոր անդամներին հասանելիք խնամքի
կարիքի օգնության արտոնված գումարից, նշված հաշմանդամ
երեխային հասանելիք խնամքի կարիքի օգնության գումարը:
Այսինքն, եթե ընտանիքում կա 4 հոգի, որից մեկը հաշմանդամ
երեխա է, ապա օգտագործեք խնամքի կարիքի օգնության
արտոնություն 3-ի համար միայն: (_____)

Գումարած երեխայի ստացած եկամուտը, ինչպես Ընկերային ապահովության
(Social Security) նպաստները, նաեւ երեխայի
ստացած որեւէ նպաստի եկամտի գումարի երկու երրորդը _____

Հաշվեկշիռը երեխայի հասանելիք եկամտի գումարն է \$ _____

Գումարը հավասար է, թե՞ պակաս մեկ անձի Աղքատության դաշնակցային
մակարդակի 100%-ից (\$903 2009-ին), գումարած \$230 հատուկ գեղչը:
Եթե այո, ուրեմն երեխան իրավասու է:

*Խնամքի կարիքի արտոնությունները հաշվվում են այսպես. 1 հոգի՝ \$600,
2՝ \$750, 2 մեծահասակներ՝ \$934, 3՝ \$934, 4՝ \$1100, 5՝ \$1259, 6՝ \$1417,
7՝ \$1550, 8՝ \$1692:*